

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱԽԿ ԿԱՐ ՈՒՒԷ ԲՂԹԱՅՈՒԹԻՒՆ
ՊԵՏԵ Է ՈՒՂՂԱՆ ԱՌ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Բարձր
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Չեռագրներն եւ չեն դարձուր,
ԱՐՏՈՆԱՏԷՐ Ժ. ՄԻՆԻՆԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՅԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|--------------------------|------------|
| ԵԳԻՊՏՈՍ | |
| ՂՐԵ, ՈՂՁ | |
| Գանձիւրի համար | Տարեկան 50 |
| » » վեցամսեայ | 30 |
| Շրջակայից » | Տարեկան 60 |
| » » վեցամսեայ | 35 |
| ԱՐՏԱՆՉՄԱՆ ԼՍԱՐ | |
| Տարեկան | Ֆրանկ 18 |
| Վեցամսեայ | » 10 |
| ԹԱՌՍԱՅ ԵՒ ԿՈՎՈՍԻ ԼՍԱՐ | |
| Տարեկան | րուբլի 7 |
| Վեցամսեայ | » 4 |
| ԲԱՅԱՆՈՐԳԱԳՐՈՒ ԿԱՆԻՒ Է | |
| ԵՒ ԲՂԹԱՅՈՒԹԻ ՇԱՌԲԸ | |
| Թերթին վարչութեան վրայ է | |

ՉՈՐԵՔՇԱՐԹԻ 8/21 ՆՈՅՄԵՐ

ՔԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 48

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՅՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11-ԷՆ ՍԿՍԵՍԼ ՎԱՐՁՈՒԹԵԱՆՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔԻ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅՍՏՈՒՅԻՉ ՏԻՍԱ ՍՄԲԱՏ ՓԱՓԱՉԵԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԸՆԿԱՎԱԳՐՆԵՐԸ ԱՆՎԱՅԻՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԻՆ:

ԳՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Անցեալ թուով Աղեքսանդրի վաճառականներուն անանկութեան վրայ գրած առեւն երբէք երեւակայութենէս անգամ չէր անցնէր որ այսօր ալ գրողներու անանկութեան վրայ պիտի խօսիմ. արդարեւ հրատարակիւ վրայ որքան շնորհքով գրողներ կային՝ ամենքն ալ կարծես անանկացան ու թողուցին հրատարակել կարգ մը անխոհեմ գրողներու որոնք իրենց անիմաստ յօդուածներով կը կարծեն թէ հրատարակել կրնան ծաղրել:

Եթէ ըսենք յանցանքը ասոնց չէ, հրատարակէն քաջուողներուն է, կը սխալինք. ահաւաստի թէ ինչո՞ւ համար:

Մատթէոս Մամուրեանը չը պիտի գրէ այլ ևս, որովհետեւ ծերացաւ, բըժիշկները զինքը դատապարտեցին չը գրելու:

Եղիա Տէմիրճիպաշեան, ջգային և մտային հիւանդութենէ կը տառապի այս պահուս Ետեւի-Գուլէի Ազգային հիւանդանոցին մէջ. անկէ ալ յոյս չը կայ:

Գուրգէն, Պէրպէրեան, Գարազեան — սոյն վերջնոյն աչուրները կուրցած է վերջերս — գրաբառեան գրագէտներ են որոնց ոճին համար ժողովուրդը գրամ չի վճարեր. արդէն մեր ժողովրդի սովորութիւնն է, ուրտեղ որ տգեղ և գոհնիկ գրուածներ կան անոնց գրամ կը վճարէ, իսկ անգին լուրջ գրուածները երբէք չը գնահատեն, որովհետեւ գեղեցիկը տգեղէն զանազանել չը գիտեն նա:

Եթէ կային մի քանի հրատարակագիրներ որոնք երբեմն «Հայրենիք»-ի երբեմն ալ «Արեւիք»-ի շուրջը կը հաւաքուէին ու օրուան կեանքին

վրայ շահեկան յօդուածներ կը հանէին հրատարակ, անոնք ալ Մուրթանը հանգարտ չը թողուց Պուլոյ մէջ, որով սովորուեցան երկրէն հեռանալ ու այսօր ապին անգին ցըրուած են. մին Եղիպոս, միւսը Լոնտրա, փարիզ են:

Եղիպոսի գրատէրներն ալ Պ. Ալփիարը հանգարտ չը թողուցին ու խնդրեցին իր հաճոյակատարութենէն որ անգամ մը ևս գրէ ձեռք առնէ. վերջապէս ամենքն ալ Պուլոյէն քաջուեցան ու հրատարակել մնաց «Բիւզանդիոն»-ի հանրածանօթ խմբագրին:

Գալով Եղիպոսի, հրատարակել առջի օրէն գրեթէ կարգ մը ինքնակոչ հրատարակագիրներու և նորընծայ գրողներու ձեռքը մնացած է որոնք մինչև իսկ տիրապետել կ'երազեն Հոյ մամուլին. երբեմն քննադատողի հովեր կ'առնեն անոնք իրենց հրատարակ նետած յօդուածներուն մէջ, վճիռներ կ'արձակեն այս ինչ անձին կամ այն ինչ հաստատութեան գէմ. այս կարգի իմաստակներ կը փառաւորութիւն երբ Յովսէփ Եպիսկոպոս Ալվազեանի գէմ բան մը գրած ըլլան լրագրի մէջ, երբ Պ. Յատուրեանի նման գերատանի մը արարքը մատնանիչ ընեն, երբ «Սփինք»-ի կերպարները առնելով հեղինակութիւն մը կը գրապարտեն. երբ որ կը համարձակին Սամուէլեանի նման Ռուսահայ համալսարանական քահանայի մը քարոզը ձաղկելու:

Սամուէլեանը հրատարակի գրական անանկութենէն շփացած աւելի սոժ կ'առնեն երբ կը գտնան իրենց ճամբուն վրայ թերթ մը որ փողոցէ փողոց գեղեցիկ, յօդուած մուրալու համար մէկ երկու գրագէտի դուռը բարձրած ու անոնց անտարբերութենէն յուսահատած, կ'իյնայ իրենց ձեռքը շնչասպառ. թերթ մը որ ամեն կերպով հաճոյակատարութիւն կը խոստանայ այդ նորեկներուն, բայց ասոնք այս ինչին կամ այնինչին հետեւեցած անձնական հաշիւին ստոր միջոցաւ կարգադրելէ զատ ուրիշ ծառայութիւն մը չեն սպասեր անկէ:

Հոն մին իր գրիչը «Սփինք»-ի թքած արեան մէջ կը թաթխէ՝ գրապարտելու համար հեղինակութիւն մը որուն ինչ ըլլալը ո՛չ ինք հասկցած է և ո՛չ

միամտիտրիւն ընող թերթը. հեղինակութիւն մը որոյ տողերը շարադրող գրիչը՝ այսօր «Նոր-Օր»-ի էջերուն կը նուիրէ զինք անձնուիրաբար:

Ուրիշ մը կուսակցական մեղանի մէջ կը թաթխէ իր գրիչը դատապարտելու համար Տ. Սամուէլեանի նման համալսարանական կրթութիւն ստացող Ռուսահայ եկեղեցական մը որ Աղեքսանդրիոյ եկեղեցոյն մէջ բարոյ ստած առեւ՝ իբր թէ կուսակցական ինդիւստրիալ շոշափած ըլլալուն՝ կուսակցութիւն մը վերաւորած գործուեր է: Տեսէք ո՛ր աստիճան կը նուստանան մեր նորեկներն որ բան մը գրած ըլլալու համար, կը գրապարտեն կղեր մը այնքան զոհնիկ լեզուաւ ու կուսակցական ոճով:

Հեռի, հեռի, մէկգի թողունք կուսակցականոցին ու անհատական խնդիրները. վաննք զանոնք մեր թերթերուն մէջէն որ մեր տունը քանդելու կը ծառայեն. թերթ մը և կամ հրատարակային յօդուած մը հասարակաց ձայնին օսկան միայն պէտք է ըլլայ. անհատական և կուսակցական վէճերը պաշտպանել և կամ դատապարտել զգուշանալու է. ժողովուրդը գրամ կը վճարէ թերթին՝ ոչ թէ անձնական և կուսակցական կրթութիւնը ապահովելու ըլլալու, հապաի բարին և ի գիտութիւն առաջնորդող յօդուածներու ընթերցանութեամբ զրօնելու և օրոտելու համար:

Մենք ասով չենք ուզեր ըսել թէ քահանան, գերասանը, առաջնորդը, երեսփոխանը չը քննադատուին. թող քննադատուին, բայց ոչ թէ նորեկներուն գրչէն ժայթքած կարգ մը հայհոյանքներու տարափով, կուսակցական յարձակումներով, անհեթեթ գաղափարներու արտայայտութեամբ, սղեղ բառախաղութիւններու հոսանքով. ասոնք քննադատական չեն, ինչպէս ըսինք, ցուցամուլութիւն մը կամ գրչափորձութիւն մը այդ նորընծաներու կողմէն:

Ո՛ր են այն քննադատականները որ երբեմն մեր ժողովրդական գրագէտները կ'ընէին մեր հանրային գործիչներու գէմ:

Այ՛, քննադատականը այն գըրուածն է որուն մէջ քննադատողը,

իբր տէր հզոր մտածումներու ու ողջամիտ գաղափարներու, գիտակից իր գրածին՝ որոշակի կ'ուզէ թերթութիւններ պատճառարանելով զանոնք. հոն քննադատողը կը հետեւի ամենայն յարգանքով ոճի պատշաճութեան, բարագրաւորութեան ու լեզուի գրական ազնուութեան, որ մեր ինքնակոչ բնականապէս թող կը պակսի:

Ինչ տարբերութիւն կայ քննադատողին և դատաւորին մէջ, կը հարցնեմ:

Տեսա՞՞ք էք դատաւոր մը որ յանցաւոր կամ անիրաւ մը դատապարտած առեւ՝ անոր գէմ իր արձակած վճիռին մէջ գոհնիկ լեզու գործածէ և կամ անտեղի յարձակում ընէ. երբէք: Միեւնոյնն է քննադատողը որ հրատարակաւ դատապարտել կուզէ հանրային գործիչ մը. հոն գրագէտը ինքզինքը չէ որ ցոյց պիտի տայ, հապաղիմացիկին թերթութիւնները. բայց մեր նորեկները չեն հասկնար և ոչ ալ կուզեն բժշկուիլ այդ ցուցամուլութենէն:

Վերջը վերջը երբ կը նետուին ու գրեն այդ կարգի բան մը, քիթներին բերաններն կը պարծնեն ու հրատարակել իրենց վրայ կը խնդաքնեն. ասոնց քննադատական գրելը՝ զուրոյցի մը վարի կարգի աշակերտներէ մէկուն փիլիսոփայութեան նիւթի մը վրայ ճառելուն կը նմանի:

Թո՛ղ քաջուին ուրեմն ասոնք, ու ընտրեն իրենց յարմար նիւթեր. գրելու, յուզելու, միթէ նիւթ կը պակսի, այդ տեսակ նորեկներու համար որոնք կրնան օրուան լուրեր խմբագրել, տեսարան մը նկարագրել իրենց գրչին զարդ մը տալով, զոր օրինակ:

Քրիկէրը փոռ-Սայիտէն անցած միջոցին մասնաւոր պատգամաւորութիւն մը մեծ ցոյց ըրեր է ի պատիւ թրանսպարի նախագահին:

Գահիրէի որբախնամները միանալով՝ խտիվական թատրոնին մէջ մեծ պարահանգէս մը պիտի տան, ի նըպաստ որբերու և Հայ Լսարան-Ընթերցատան որ ունի իր օսկանը «Նոր-Օր»:

Ահաւաստի նկարագրելիք նիւթեր. բայց երբէք քննադատութիւն, յարձակում ներքի չէ այդ նորընծայնե-

բու համար. եթէ բացառաբար կոչում ունենան խոյ, պէտք է որ մշակեն գրական ասպարէզը, ու կեանքին վրայն փորձառութիւն առանձին:

Բանաստեղծութիւն յօրինելու չը նմանիր, որ ներշնչում մ'է. ոչ ուղղեցնելով ինքն մը նկարագրելու որ յատկութիւն մ'է. բննադատականին մէջ օտարի մը արարքը և գործը մասնանկել կ'ըլլայ, որ աւելի արամարանական և առողջ գաղափարներու և պատշաճ լեզուի կարօտ է:

Ինչո՞ւ համար փաստարան մը Եւրոպայի մէջ ինչպէս Եգիպտոս՝ զբարցնէ շրջանաւարտ ըստին վերջը մինչև երեք տարի պարտաւոր է վարպետ փաստարանի մը բով աշխատել սրած ընել և փորձառութիւն ստանալ. բժշկի մը, երկրաչափի մը, հողագործի մը և այլնի մը համար՝ յար և նման պայմաններ կան. պատճառը պարզ է. որպէսզի ասոնք իրենց արուեստին խաղաղութիւնը գտան տիրոջը, հիանդին, հոգին և այլնի վրայ չը փորձեն:

Ուրեմն ինչո՞ւ մեր նորընծայ գրիչները, որոց վրայ օրէնք դնել կարելի չէ, ինքնարկարար չը մտածեն, դոնէ յարգել այս օրէնքը ու զիրենք գիտող հրապարակագիրները:

Ինչո՞ւ իրենք ալ օրինակ առնելով փաստաբանէն բժիշկէն կայրէն, չը բաշտին իրենց խաղաղութիւն փորձելէ ասոր անոր վրայ փրշտփոմանութիւն մը որ արատը եղած է մեր գրական հրապարակին: Եւ ո՞վ գիտէ թէ այդ անպատահալութիւնն ալ մին եղած չէ այն պատճառներէն որոնց համար մեր գրական հրապարակը թափուր մնացած է այսօր:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

«Խօսել Մէյլ» ամերիկեան օրաթերթի Սեպտեմբերի թիւին մէջ Խօրէն քաղաքի Հայ բողոքական քարոզիչ՝ պարոն կարապետեանի կողմանէ զրկուած նամակ մը երևցած է. պ. կարապետեան իր գործունէութիւնը պարզելէ վերջը կը գտնուայ Հայոց Եկեղեցւոյն վրայ ու կարգ մը սխալ և արհամարհական դիտողութիւններ կ'ընէ. «Հայոց եկեղեցին, կ'ըսէ, իր կենդանութիւնը կորուսած է և զրկելէ ազգային հաստատութիւնէ զատ ուրիշ բան մը չէ. կրօնականները մեծաւ մասամբ ազէտ են, և անոնցմէ շատ քիչերն աստուածաբանական ուսում առած են. Հայ եկեղեցւոյն մէջ ազդեցող կը կատարուի զրարաւ որ ժողովրդեան անմասնելի ըլլալուն չի կրնար իր ազդեցութիւնն ունենալ. այդ պատճառաւ է որ եկեղեցիին հոգեւոր ազդեցութիւնը տկար է. շատեր կը բողոքեն այն անպատահալութեանց դէմ՝ և եթէ երբէք յոյս մը կայ ազգայն բարեկալութիւն, առ օրն ալ հեռի է»:

Իօրէնսի նորընծայ հոգեւոր հովիւ Արթ. Տ. Արսէն վ. վեհօրհն, նոյն ամերիկեան թերթին մէջ կը պատաս-

խանէ հետեւեալն, որ «Եկեղեցի»ին մէջ ևս արտասպառած է:

Առջին՝ Հայոց Եկեղեցին ոչ «Հայոց կաթողիկոս» եկեղեցի կը կոչուի ոչ «Գրիգորեան եկեղեցի», այլ Հայոց Առաքելաշակում եկեղեցի, և ի Սրբազան Առաքելոցն թաժուտ և Բարձուղիմուտ հաստատուած լինելով բոլորովին անկախ է բողոքականութեամբ, և Անգղիոյ մէջ ըրինատնութեան մաստ գործելէ զարեք յատու փորը Արթոյ մէջ Քրիստոսի Ս. Ա. ետարանը տարածելու միակ միջոցն էր: Երբորդ թէ Հայոց Եկեղեցին իր կենդանութիւնը կորուսած է կամ ոչ՝ թող անաչառ ընթերցողը գտնէ այն անթիւ նախապայմաններ որոց նոյն իսկ յատու մեր իրենց կեանքը գոհեցնէ Քրիստոսի Ս. Ա. ետարանի սիրոյն համար: Ե՛վ ճշմարիտ է թէ «Արթն մարտիրոսաց սերն Եկեղեցւոյ», սրբն Հայոց Եկեղեցւոյ կենսունակ գործութիւնը և արդիւնաբերութիւն յայտնի է: Երբորդ Հայոց Եկեղեցին Աստուածաբանական Գրգրոցներ ունի ի Ռուսիա, ի Տաճկաստանի Պարսկաստան, որոց մէջ նշանաւոր հայ աստուածաբաններ հեղուարականութեան ապագայ սերունդը կը կըմնեն: Բաց աստի ոչ սակաւ Գերմանիա և ուրիշ Եւրոպական գաղութներ կ'իրման իրենց աստուածաբանական քննութեան առաջ ևս կատարելագործուի: Չորրորդ՝ Հայոց Եկեղեցւոյ պաշտօնական լեզուն Պարսն կարապետեանի կարծածին չափ ալ անհասկանալի չէ, և այդ լեզուի շինել ներգործութիւնն է որ մեր բուն հայրենեաց մէջ հարկաւոր և հազարաւոր լարեզաշտ հաստատեցնելով կըլցնէ մեր եկեղեցւոյն ոչ թէ միայն կիրակի օրեր այլ նոյն իսկ շաբթու մէջ: Ս. Գրոց և եկեղեցական մտանկից այդ լեզուաւ թարգմանուած կամ շարադրուած լինելն, և զարարուր նորիսկանացուին այդ բարբառին (որ կանոնաւոր զարդարական ընթացք կատարող ամեն հայու բուսականին հասկանալի է) մէկ կողմէն, և աշխարհաբանի բազմաթիւ ասարեր ճիւղերու գրութիւնը (ըստ որում իւրաքանչիւր երկիր կամ նահանգ իր ասանձին դատաւարարան ունի) միւս կողմէ այս մասին որ և է փոփոխութիւն անհանրին կացուցած է մինչ ցարդ: Սակայն Պարսն կարապետեան մնացած է յիշի որ բարոյն միշտ աշխարհաբան կը ինտի: Հիմնաբար թէ Հայ Եկեղեցին ինք ազդեցութիւնը կորուսած չէ Հայ ժողովրդեան վերայ՝ յայտնի է այն

(*) «Կաթողիկոս» բառը Ամզունքէն կը մըլ շարձուի Առաքելից և ոչ թէ ճշմարտեպան իմէ որ հայր Արսէն ըսել կ'ուզէ: Ամտարակոյս Հայաստանեաց Եկեղեցին Կաթողիկոսի, Եկեղեցի է, ինչպէս կը գտնուի թէ չաւատարմի մէջ՝ որովհետև մա ունի և անփոփոխ կը պահէ Քրիստոսի եկեղեցւոյ կաթողիկոսութեան ժամանակ ունեցած հաւատն: Նոյնպէս Կաթողիկոս կըմն կողմէն այն ըսողը եկեղեցիք որք մոյն կաթողիկոսէ հաւատն ունի: Այս միտքով միայն կարելի է այս բառն այժմ գործ ածել, եթէ ոչ Քրիստոսի եկեղեցւոյ պատկանող հաճախածուց մերթոյ Կաթողիկոսի, Եկեղեցի այլ ևս չկայ: Հետմիջակամ Եկեղեցին իմքովնք միակ Կաթողիկոս (այսինքն, Կաթողիկոս) կը համարի, և բողոքականք որք կաթողիկոս եկեղեցւոյ հաւատոյն համար փոյթ չունի՝ «Կաթողիկոս» բառը գործածութիւնը ճշմարտեպան եկեղեցւոյն թողած է: Երբան որ մենք ևս լատինաձայն Կաթողիկոս բառն ճշմարտեպան կը յատկացնենք, զարծեալ պէտք է զգուշանալ որ երոպական լեզուաւ հասեմք թէ մեր եկեղեցին կաթողիկոս (այսինքն, կաթողիկոս) չէ:

բազմաթիւ եկեղեցւոյնքն, վանքերն և իւր ազդեցութեամբ հաստատեալ և կատարեալ ուրիշ շէնքերն, որք ամենքն ալ հայ ժողովրդեան յօթարկամ ասարերով կը պահուին: Նոյն իսկ Ամերիկայի մէջ, որոյ հայ բնակիչք բոտ մեծի մասին ազգաս և աշխատար գասի պատկանող անձինք են, հայ ժողովրդը մէկ եզրակոպտ և ինն հագեորական կը պահէ, և Ռուսորի, Նիւ-Եորքի, Փրովիանտի և այլ եկեղեցեաց ժախքերը ինքնին կը հոգայ ասանց արտարին օգնութեան:

ՏԵՐ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ՀԱՅՐ

Ինչպէս ծանուցած էինք «Նոր-Օր»ի վերջին թիւով, առաստայ Արթմանապատի Տ. Սարգիսն յաճանայ Սամուէլեան՝ անցեալ կիրակի օրը պատարագից անդոյս Ս. Ստուածածին եկեղեցւոյն մէջ: Խուռն բաղմունքին մը լցուած էր եկեղեցին: Արթմանապատի բահանան բարոյ մը խօսեցաւ, ընարան ունենալով Ա. ետարանի սա խօսքը. «Որ սիրէ զանձն իւր յաշխարհիս յայտնի ի կեանն յաւիտենական կորուսցէ զնա և որ առեա զանձն իւր յաշխարհիս յայտնի ի կեանն յաւիտենական կորուսցէ զնա»:

Արթմանապատի Տ. Տ. Հոյրը առանց նիւթէն շեղելու այս վսեմ խօսքին իմաստը մեկնելէ և սահուն ոճով մը բացատրելէ վերջը հակիրճ և աղու կերպով կը թակահար հաստատութեանց մեծ հող ասարուելու պէտքն շեշտեց:

Տ. Սամուէլեանի քարոզը շատ լուստպարութիւն թողաց ներկայից վրայ:

Արդարեւ Տ. Սամուէլեանի ներկայութիւնը եթէ բեկբութեամբ ողջունեցաւ բաղանդակ Եգիպտոսի մէջ, պատճառը ոչ այլ ինչ է բայց եթէ իբր հոգեւոր հովիւ ժողովրդեան, իր վսեմ կողման համապատասխան տմէն յատկութիւններով ստուած ըլլալն է. առաւելութիւններ ուրիշ զուրկ է ընդհանրապէս մեր հոգեւոր գասը:

Տ. Սամուէլեանի միայն համալրասարանական ըլլալը չէ որ համակրելի ըրած է զինք ամենուս, հապա նակ իր հօտին ծառայել գիտնալը: Իր ստացած մարի հարստութիւնը միայն իրեն համար չէ, հապա իր ժողովրդին, ու ազգին համար. ուրեմն ինչպէս չօղորուի ազգը և ժողովրդը պայպիսի հազուագիւտ հովիտի մը ներկայութիւնէն:

Թա՛ղորդ թիւով պիտի հրատարակէք Տ. Սամուէլեանի Աղեքսանդրիոյ մէջ խօսած քարոզին մանրամասնութիւնը՝ շտտերուն փափաքանց համեմատ ենչպէս նակ կենսադրութիւնը:

ՉԻՆԱՍԱՆԵՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Եւրոպայի դաշնակից բանակներու Չինաստանի մէջ ըրած վայրագութիւնները մինչև հիմա շատ մը եւրոպական թերթեր արտասպառելի Գերմանական թերթերը սովորաբար յայտնութիւններ երեան կը հանեն,

զոր կը քաղեն զինուորներուն իրենց ծնողաց գրած նամակներէն: Կարգացէք հետեւեալ նամակները, և պիտի տեսնէք թէ ինչպէս կը գործէ քաղաքակրթեալ իշխուսը:

Բեքին, 20 օգոստոս 1900

Այսօր կէս օրին ստիպուեցանք շուտ մը ելնել սեղանէն և ծովային հետակ զօրաց օգնութեան համար: 76 Չինացիներ բանասարկեցինք, և իրենց հետակներով կարուկապեցինք զիրենք: Երբ բանակ կը վերադառնայինք, բանի մը անսիրտ անգութներ այնքան տախպալեմամբ կը չարարէին զանոնք որ արեւոր դեռի պէս կը հասնէ:

Ճաշին վերջը, ամենքն ալ մահտան գտտուարատ և յան: Գլխատուցներուն մէջ ևս ալ կայ: մահտան գտտուարատ օրինքն երկրորդ փոփոխ, և վիցը՝ իրենց երիտասարդութեան համար ինչպէս եցան: Միւս 68ն ալ յարցանի բոնուեցան: Տաներէն լայլ հետն կեցած կինք. իւրաքանչիւր պատարանները իրարմ շար բայ հետ կին: Եւր որ «նշան աւեր» հրամայեցաւ, զատաբարտները ձեռքերին միացնելով թողութիւն ինչպէս: Բայց սպան «կրակ» հրամայեց և 76 Չինացիները թուալեցան այն փոսն մէջ. զոր իրենք փորած էին:

Ահաւասիկ ուրիշ նամակ մը, զոր Գերմանացի զինուոր մը՝ Բէքինէն իւր մօրը զրկած էր, Սեպտ. 17ն:

Տաք շարձիլ ի վեր մեկնած եմ այդ տեղէն և զնո նամակ գրած չեմ ձեռի. Հապա այսօր հանգիստ կ'առնենք և հիմա մահտանայ սննիմ ձեռ վրայ խորհելու: Բանակներն հաստատած ենք Բեքին քաղաքին տուր: Երկրորդ օրն իւր մը մէջ, Չինաստանցիներու պաշտած փայտե ուրձաններուն պէս նիշար ենք: Մայրիկ, միջև հիմա ոչ վերաւորուած եմ և ոչ ալ հիւանդացած: Պատերազմի մէջ անցած պարճածը նկարարել անկարելի է:

Յիմարութիւնը միայն կրնայ կատարել այն սպանութիւններն և կոտորածները, որոնց ներկայ գտնուեցայ: Ապագայում է մեզ թէ ճամբուն վրայ սրու որ հանդիպեց պետք է հրացանի բանել, որովհետև Չինացիները քաղաքակրթեալ չեն: Եւ բան մը չեմ հասկնար ասիկ. բայց ինչ համար զարհուրելի կը թուի հրացանի բանել ամեն մարդ, և նոյն իսկ բանասարկեցները սովորով սպաննել փամփուշտ չ'սպանելու համար: Կիրակի օրը կէս րէն վերջը 74 Չինացիներ սուհնով սպաննեցինք: Ասոնք մեզմ վերապահ զօրք մը սպանած էին. ամբողջ գոյին հրաման տրուեցաւ որ անմիջապէս հալածեն Չինացիները, որոնցմ բանասարկուեցան 74 հոգի: Սյնբան վայրագորէն կատարուեցան սպանութիւնները, զորս մարդ չկրնար նրկարարել: Կը վերջացնեմ գրութիւնս, յուսալով որ իրաց այս միճակը երկար չտեք, որովհետև վերջը վերջը կը մտնամ մարդ ըլլալ և վագր մը կը գանա՛մ:

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Տ. Կարապետ Աւոյ բահանայ Եգիպտոսի Հայոց նախկին Առաջնորդական անկապահ, վախճանեցաւ կիրակի երկրորդ ժամը 5ին, 80 տարեկան հասակին մէջ:

Արարողութեան կարգը երկուշաբթի առաւուտ ժամը 11ին կատարուե-

ցաւ. Արժ. Տ. Սրապիւն քահանայ Սամուէլեան սրտառու զամբանական մը խօսեցաւ. ժամը 2 ու կէսին յուզարկաւորութեան թափօրը մեկնեցաւ եկեղեցիէն դէպ ի Մարմինայի գեղեղմանատունը: Բնախօրին առջևէն կ'երթային երեսունէ աւելի ոստիկաններ նաև հեծելազօրներ. որոնց կը հետեւէին Ազգային վարժարանի սաներն ու սանուհիները. ներկայ էին նաև վաճառ. Ազգի պէյ Երուստֆ և Ազգային վարչութեան բոլոր անդամները. Պապական Հայոց, Յունաց, Խաչատրեան և Սուրբաջիններու եկեղեցական դասը:

Տ. Կարապետ Հայր կը թողու միմիայն մէկ զաւակ, Տիար Յակոբ Կարապետ, որ Գահիրէի ոստիկանական վարչութեան Եղեղմանական գործոց աստիճան պետն է. մեր սրտազին ցաւակցութիւնները կը յայտնեն յիշեալին:

Տ. Կարապետ Հայրը քառասուն տարիէ ի վեր Գահիրէի Ս. Աստուածածնայ եկեղեցոյ քահանայ ձեռնադրուած է:

ՎԻՍԻ ԿՍԹՈՂԻԿՈՍԱՆ ԽՆԴԻՐԸ

Կիլիկիոյ կաթողիկոսական խնդիրը այսօր առեղծուած մը եղած է մեր Պոլսոյ Պատրիարքարանի ժողովականաց: Օրմանեան Կրճ. Ժողովոյ երկու Ա. աստիճաններուն բացակայութեան օգուտով ուղեւոր խառն ժողովոյ նախընթաց նիստին մէջ Դրան պահանջին համակերպող որոշումներ տալ ստուած է. մինչդեռ Մանկունի Սրբազան այդ օրը իր բացակայութիւնը իմացնելով ազդարարած էր որ ժողովը վճռական որոշում չտայ:

Խառն ժողովոյ վերջին նիստը որ անցեալ ուրբաթ օր տեղի ունեցաւ, խիստ ազմկայի եղած է. Կրճ. Ժողովոյ աստիճանները պահանջած են որ Կիլիկիոյ կաթողիկոսական խնդրոյն առթիւ նախորդ նիստի որոշումները չեղեալ նկատուին քանի որ օրինական մեծամասնութիւն չկար. հետեւեալ Կեսարիոյ Առաջնորդ Տրդատ եպիսկոպոսի Սիս դիմելու որոշումը յետաձգուի և ցանկը Դրան չտրուի: Պատրիարքը և աշխարհական անդամները հակառակը պնդած են:

Խաչատրեան Տ. Սահակ եպիսկոպոս որ տասնեակ ամիսներէ ի վեր Կիլիկիա կ'սպասէր Կաթողիկոսական ընտրութիւնը կատարել տարու համար, ծանծարայած կուզէ այլևս մեկնիլ: Տ. Յարութիւն Պատրիարք ևս անոր վերադարձը կը պահանջէ: Բայց խառն ժողովը այս անգամ կրկին զրեց Տ. Սահակ եպիսկոպոսի որ ժամանակ մըն ալ մնայ Առաջնայի մէջ: Միւս կողմէ ալ Տ. Տրդատ եպիսկոպոսի Կեսարիայէն Սիս երթալու մասին պաշտօնական թղթեր կը պատրաստուին:

Պատական թերթերէն կ'իմանանք թէ անուանի գրադիտուհի Տիկին Սըրբուհի Տիւտար Փաշա քաղցկեղէ ծանրապէս հիւանդ և անյոյս վիճակի մը մէջ է եղեր: Նոյնպէս Տ. Եղիա Տէմիրճիպաշեան (Փրատէր Առաժ) որուն հիւանդ ըլլալը ծանուցած էինք, ազ-

դային հիւանդանոցը կը գտնուի և կը գարմանուի իր մտային ջղային հիւանդութեանը համար: Միևնոյն ասան ցաւով կ'իմանանք թէ ախանաւոր զխանական և գրաբարոյէտ Տ. Մատթիոս Գարապաշեան ալ իր անազութիւնը, յիշողութիւնը ու բարոյութիւնը կորսնցուցած վիճակի մը մէջ կը գտնուի:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԹՐԱՆՍՎՈՒՒ ԵՍԽԱԴԱՀԸ

Երբ անցեալ շաբթու Թրանսլափ նախագահը Պ. Քրուկէր Հոլանտական «Կէրէրթաւտ» պատերազմական շոյճնաւով Բօր-Սայիտ հասաւ, մինչև այն ասան նուազաւոր դեռ լուր չունէր անկէ ուր իր վարժը, և անձ հրաման ստացաւ հանկէ մեկնելու դէպ ի Մարսէլ, ու «Կէրէրթաւտ» վերսկսու իր ճամբան:

Նաւը թէպէտ չառ քիչ մնացի Բօր-Սայիտ, բայց բազում այցելութիւններ ընդունեցաւ: Նախագահը թէև չէր ուզած ոչ որին ունկնդրութիւն ընել, մէկ երկու ասան ձառնարկներ և զան սակայն:

Պ. Քրուկէրի սենեակը՝ նաև առջևի ձախակայան էր. մէջը կար մահճակալ մը, արդուզարդի սեղան մը և հայելիով պահարան մը: Պահարանին վրայ կար քանի մը զոյգ ոտնաման և իր նախագահական շղարշապատ գլխարկը: Զոյգարանը նախին ետևի կողմն էր. Սեղանը սրահին ճիշդ մէջտեղն էր, և շուրջը նոտարաններ շարուած: Միջնորմերէն կախուած էին Հողանաւի արքայական ընտանեաց պատկերները: Վիկտորիան Երիտասարդ թագուհոյն պատկերը, երկու պատահաններու միջև՝ պատուաւոր տեղը բռնած էր: Նախագահին բնակութեան ամեն անգըրը երկարական լոյսեր կը վառէին:

Պատերազմին զոհ դացող Պօլսիներու այրելիքուն և որբերուն օգնելու նպատակաւ Սուէզի ջրանցքի ընկերութեան գործաւորները որ արդէն 413 ու կէս ֆրանքի գումար մը հոն գանակած էին իրենց մէջ, Թրանսլափ զրկելու համար, առիթէն օգտուելով գոմիթէի մը միջոցաւ նամակով մը Պ. Քրուկէրի զրկեցին, որ փոխադարձ նամակով իր շնորհակալութիւնը յայտնէ:

«Լիպթիթէ» իմբադիրը Պ. Շարլը Սէնթիւ ալ կ'ըսէր է անանկ և խօսակցել Սուէզի մէջ Պ. Քրուկէրի հետ, և նոյն իսկ աննկ անոր լուսանկարը իր սենեակին մէջ:

Վերջին պահան կ'իմանանք թէ մեծ ցոյցեր կը պատրաստուին Մարտիոյ մէջ, հակառակ Փրանսական կառավարութեան սուած պատուէրներուն:

ԹՈՒՐԻՒՄ. — Վիլհէլմայի «Քորէրէրթաւտ» Բօլթիթէր լրագրին Պօլսոյ թղթակիցը կ'ըսէր թէ Իզլէթ ֆուտա ըսչան՝ Մատրիսի Թուրքիոյ դեսպանը, Սուլթանին իր հրաժարականը սրբուած է, և միտք ունէր Թուրքիոյ արդի կացութեան վրայ լայնախօսութիւններ ընել, և թէ՛ փորձեր եղած էին զինք այդ խորհրդէն ետ կեցնելու:

Իզլէթ ֆուտա ըսչան կը ստէ այս լուրը հետեւեալ նամակը զրկելով Թաւնի.

«Կը փութամ ծանուցանել թէ ու ե է որոշում սուած չեմ բանախօսութիւններ ընելու իմ եկրիս արդի կացութեան վրայ, բայց հաւատացէք որ եթէ այդ տեսակ գաղափար մ'ունենամ, ոչ որ կ'ընայ արդիւն զիս»:

«Երբ օֆ Գոնթանթիւնը լըրադիրը կ'ըսէ թէ Սուլթանը Գիւրմանիոյ կայսեր իր զօգահութիւնը յայտնած է, տէրութիւնները զինք Չինտուտանի խնդրէն դուրս ձգելու համար:

Սուլթանը Բէքին զօրը զրկել ուզելու մտադրութիւնն ալ յայտնած է, Մայրապոյս-Արեւելքի մէջ քաղաքակրթութեան գործին մասնակցելու համար:

Սալու, Պարսից Շահին գէմ ըսպանութեան փորձ կատարողը, ց'կեանքս տաժանակիր աշխատութեան գաւապարտուած է:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ն. Բ. Խալիլը իր սարեկան պարահանգէր պիտի տայ Ազգային պալատին մէջ առաջիկայ Յունար ամսուն:

Ն. Վ. Պօղոս բաշա Նուպար Ֆէյուս մեկնած է Թամիէի Տարա Սանիէէն վերջերս ստացած հոգեւոր այցելելու համար:

Ն. Բ. Խալիլը կիրակի, կէս օրէն վերջը իր Ազգային պալատին մէջ ընդունած է Մահմիտ պէյ, որ Սուլթանը զրկած է մասնաւորապէս, ինքնագիր նամակով մը Տամատ Մահմուտ ըսչային խնդրին առթիւ:

Տեղույս Թրամէյ ընկերութիւնը ի նկատի առնելով Բուրջերու գծին վրայ ճամբորդողներու թիւը, որոշած է ժամանակացոյցին մէջ փոփոխութիւններ մտցնել, և թռեկներու թիւը աւելցնել: Ամսույ 20էն սկսեալ պիտի գործադրուին նոյն գծին թռամվայներու երթիկութեանց նոր ժամանակացոյցը:

Ամսույ 24ին Օրբերայի մէջ տրուելիք առաջին ներկայացում մը պիտի ըլլայ Լօնէնկընէն:

Վիլհէլմայի Պարսն Նաթանիէլ սը Ռօշիլա ընկերակցութեամբ իր քարտազարին, բժիշկին և վեց անձնաւորութիւններու հետ՝ իր «Վէկիլիա» շոյճնաւով Աղեքսանդրիա եկած է:

Վէկիլիա Ներսի կողմը խիստ շքեղ է: 18 Արարքընան ունի, և ի պահանջէն հարկին, կրնայ 200 մարդ առնել:

ՀԵՈՒԳԻՐՆԵՐԷ ԲԱՂՈՒՍԾ

Բարիկ 19 նոյ.

«Տ. Ն. Սիեքը» կը յայտարարէ թէ հաւանականաբար Վլաթիմըր մեծ դուքը, մինչև որ Չարը կատարելապէս ապաքինի՝ հիմակահիմայ փոխանկարաց պիտի անուանուի:

Լոնտոն 19 նոյ.

Բէքինէն «Թայմզ» կը գրեն.

Լի-Հունկ-Չանը կ'ըսէ թէ Չինկ իշխանը՝ Մանկուլայի սահմանադրուող գնտուող Նինկ-Հիա-Թիէն փախած լէ: Նախարարները խորհած ու որոշած են որ այսուհետև յանցաւորները փոխանակ գլխատելու, մահուան պահիճէն վար ամենածանր պատժով դատապարտուին:

Լոնտոն 19 նոյ.

Մաղիկի հիւանդութիւնը Չինտուտանի մէջ տարածուելու վրայ է և բազմաթիւ Չինտուտաներ կը մեռնին օր ըստ օրէ:

Ո Ւ Ղ Ե Ղ Ը

(ԱՌՈՂՁՍՊՍՀԱԿՍԸ)

Ուղեղը մարմնոյ ամենափափուկ, ամենազգայնիկ և ամենաբազալընալ

մասն է: Մարմնոյ միւս բոլոր գործարաններուն լու պաշտօնավարութիւնը անկէ կախեալ է. և եթէ մարդը միւս կենդանիներէն գեր ի վեր է, այ տճար իր ուղեղին աւելի մեծ լայն է:

Ուղեղը մարի կեդրոնն է. հոն գրբուած են կարգաւ անցելոյն թանկագին յիշատակները. հոն պահուած են տարիներու աշխատութեամբ ստացած ուսումները. հոն է բանականութիւնը. հանկէ կը բղխին ազգերը սարսրեցնող խորհուրդներն ու զգացումները. քանի որ ուղեղը այնքան պաշտօններ կը կատարէ՝ շատ կարեւոր է որ բնն զայն խնամելը: Բնութիւնը զինք պաշտպանած է արտաքին ամեն վնասներէ, և պէտք է մեկը անկէ օրինակ առնենք ու զգուշանանք ամեն բարոյական ու կենսական զրկանքէ:

Ուղեղը կարծր և ուկրուտ ներքնապատերու մէջ գրուած է, և անոր կոտորելու համար մեծ զօրութիւն պէտք է:

Իւր հիւթին շուրջը՝ պատեանին տակ՝ հեղուկով պատած է: Այս հեղուկը անոր համար եղած է որ վաղելու ատեն, ցնցումի ժամանակ, կամ ինչայլու ատեն այդ կեղուկը հիւթը չը վիրաւորուի: Բնութիւնը ուրեմն իրեն պաշտօնը կատարած է, ինչպէս որ կը կատարէ միշտ բայց մարդը բնութեան սարկեցուցածին ակամբ չտար, և իր մարմնոյն պէտք եղած խնամքը չտանիր: Մարդս ամեն առթիւ չպահեր անոր օրէնքները. բայց իր պատճառի, որովհետև «Մարդ մը ինչ որ ցանկայն կը հնձէ»։ Այս սկզբունքն ալ Մեղացիներու ու Պարսիկներու օրէնքին պէս անփոփոխ է:

Ուղեղին կամ մարին առողջութիւնը՝ մարմնոյ առողջութեան կախեալ է: Այն բանը որ կը փաստէ մարմնոյն կենսական փոփոխութիւններու առաջ կը բերէ ուղեղին հիւսուածներուն մէջ, որոնք կը տկարացնեն մարի կարողութիւնները: Մարդու մը կերածը կը հաստատէ իր մտքին ինչ տեսակ ըլլալը: Դժուար մարդը մէկու մը միտքը բարբոխն փոխուած կ'ըլլայ յաճախ: Միևնոյն բանը կ'ըլլայ երբ մարմնոյն սեւ գործարարներ հիւանդ է, երբ մարմնոյն փոփոխութիւններ ունի մարդ, և կամ նմանապէս անճանապարհ կ'ըլլայ հոգեւոր և կամ չափազանց կը յոգնեցնէ միտքը:

Ուրեմն միտք մը որ լաւ չ'իմանաւիր, իրերու մտթ կողմը կը տեսնէ, ամեն բան իրեն կը վերաբրէ, և ետտէր կ'ըլլայ, որովհետև ստիպուած է իրեն հիւանդ գործարաններով զբաղուիլ: Միտքը, յիշողութիւնը, դատողութիւնը և կամքը կը փոխուին: Միտքը զբաղուած ըլլալով ներքին խնդիրներով, չ'կրնար այլ ևս հետաքրքրուիլ զինք պնտացնող բաներով: Զգայաւորները — խնայականութեան ճամբ բաները — թուականութեան ճամբ ճանչնալ մեզ տրուած գեղեցիկութեանց յարգը: Այսպէս բարոյականը կը տառապի ֆիզիքական հանգամանց համար: Ոճրաբանները շատ լաւ հասկցած են ստիպ. ոճրագործին ուղեղը իր, կամ իր ճնողաց մարմնաւոր հիւանդութիւններէն վարակուած կ'ըլլայ անպատճառ: Քաջայայտ է թէ ալքոլիստ ունկնդրները տկար կ'ըլլան կամքով, և իրենց գործերու տէրը չ'են ըլլալ: Թէ՛ ափիսն գործածող անպատճառ ստախոս կ'ըլլայ, որովհետև ան կամքին, բարոյն ու չարին ընտրողութեան հետ յարաբերութիւն ունեցող ուղեղի խորհրդը կը տկարանան:

Հոգ տունինք ուրեմն մեր մարմնոյն առողջութեան, եթէ կուզենք մեր ուղեղը առողջ պահել: Թարգ. Վ.

Ն Ա Մ Ա Կ

(Շար. մատուցող թիւէն եւ վերջ)

Երկրորդ ներկայացումն Պէնզեանի խմբին մասնակցութեամբ տուած ներկայացումն է ուրիշ գիտ երեւոտն գահականի հաշիւ մը կը պահանջեմ, որ գիտ մարտն չէ. ինչպէս որ նոյն ինքն, այսօր հիւանդ, Պ. Պէնզեանի ստորագրութեամբ ինչ գրկած մի նամակէ կ'երևի, բայց ասիկայ մէջ անց չը պիտի բերի եթէ յանուն Պէնզեանի թարգման կերպով ինչ գրկած յարձակում եղած չըլար. և այսօր իսկ իմ սիրելի արհեստակցին սիրոյն համար պատրաստ եմ գոհելու արդ չնչին գումարն ալ, և անցնել իմ այնքան բրտած գոհորութեանցս մէկ անկիւնը:

Գարով վաթսուն գահականի գումար մը կայ որ որբերուն ընկերութեան պիտի յանձնուէր Պէնզեաններու կողմէն, չեմ գիտեր թէ յանձնուեցա՞ն թէ ոչ. ասիկց հինգ աւիտ առաջ չը յանձնուիլը գիտեմ:

Անցնինք այն կէտին թէ Պէնզեաններու խումբը իբր թէ անցեալ տարի ինծի ի նը պատա թատերական ներկայացում կազմակերպեր է, և հակառակ ասոր ես այսօր ապերախս գանուեր եմ, առանց հիւանդին խորհուրդը խորհուրդը ներկայացում տրուած ըլլալու համար:

Նախ բացարձակապէս կը յայտարարեմ թէ սնալ է. և ինչպիսի ուրիշ գոյնով ներկայացնել ուզած ես հանրութեան, զոր ուղղել իմ իրաւունքս է:

Այս, անցեալ տարի գեւ Պ. Ս. Պէնզեանի փարիզէն չը վերադարձած պայմանագրութիւն մը ներկայացուցաւ Պէնզեանի խումբի անդամներու կողմէն. այդ պայմանագրութիւնը Տիկին Պէնզեանի ստորագրութիւնը և կ'իբր կը կրէ. որ իմ բոլոր կը գտնուի. Տիկին Պէնզեան խոստացած էր ինչ ի սպաստ ներկայացում մը տալ, բայց զարմանքս մեծ եղաւ երբ տեսայ որ Պ. Ս. Պէնզեանի վերադարձէն վերջ ինծի տարբրինակ պայմաններ առաջարկուեցան արդ պայմանագրութեանն զոր. զերասանները պարտաւոր են եղեր 1/8 իրենց նպատաներն վճարել խումբին, ի բաց առեալ Տիկին Մարի Պէնզեանէ որ միայն 6 պլար էր վճարել ըստ իրենց մէջ եղած զերազոյս կարգադրութեան, և որոշեալ թատրոնէն զուրս ուրիշ թատրոն վարձող զերասանին համար 16 (գիտէն թէ Օրբայի մէջ պիտի տայի, իրենք տարին ազիրագիրը). իմ այս մասին գիտողութեան զեմ (խմբիւն սէն կ'էմ սիշարտան տամ պոլ օյնաթ . . .) պատասխանը տուին: Իրողութիւնները նոյնութեամբ կը պատմեմ կոր, զիտցած ըլլար:

Ալ ճարահատեալ, մտածեցի որ թողուլ և հրաժարելէն զատ ուրիշ միջոց չի կայ, բայց զիտցաւ հանց երկու երկրասարդ թատերասերներ որոնք անհունապէս ստորիցին իմ ներկայացմանցս:

Աս հետանալու վրայ էր որ Պ. Պէնզեան (մեյր և ոչ թէ հի անդը) ինչմէ յետս պահանջեց երկու տետրակ զոր ինչ յանձնած էր իր փարիզ ճարտարութեան միջոցին, ամենայն սիրով վաթսույի յանձնել և երբ իմ պահանջս պահանջեցի, յարձակողական շարժումով մը սպաննացաւ մինչև իսկ գիտեցի պատուէն արտաքուէ տալ . . .

Վերջ մտացայ գիտել տալու թէ երբ նը պատի ներկայացումներ տալու որոշում տրուած էինք, ինծի 500 զրը. ծախքի ենթարկեցին ազգարարութեան, ստանակ կային, որոնք ոչ ցրտեցան և ոչ ալ գործադրուե-

ցան ու իմ անտակիւն մէջ կեցած են գիտ, զայս պատրաստ է նաև վկայել Տ. Առաքել Պէրպլեան, որ բաշ գիտէ:

Երկրորդ գիտելու պարագայ մը Տիկին Մարի Պէնզեանի նպատակ երեկոյնն է. այն զիչերը այնքան բազմութեան առջև կը ցուցի. բայց նոյն իսկ հիւանդ Պ. Պէնզեան, զիս բեմի վրայ ծագած է, իմ մօրուքս, զիտարիս, և մազս, հագուստս նմանցնելով, արարք մը՝ որ բոլոր հանգիստականաց արգահատանքն շարժած է:

Ահաւաստի իմ նկատմամբս Պ. Պէնզեանի խումբին կողմէն ցոյց տրուած բարեացակամութիւնը . . .

Անշուշտ ընթերցողները լաւ տպաւորութիւն մը չունեցան իմ երկտող տեղեկութիւններէս, որոնք ցուալի նօթեր են մեր արհեստակիցներու . . .

Գնաստուն տարիներ անպարտ Հայ թատերական բեմը ներկայացուցած եմ, Հայ մամուլը դրուատանօք խօսած է իմ մասին:

Արդեօք կը մտնան անցեալները Ազգասիրտայէն վերադարձիս երբ Պ. Պէնզեանի խումբը միջոցներու միջոցաւ ինչ առաջարկեց միանալ. բաւ լիցի. — հետ, պատասխանեցի ի ներկայութեան բազմութիւ վկայեց:

Բամբնով չեմ աշխատիր, կը վճարեն իմ վարձքս ինչ որ պիտի ընէին նոր գերասանի մը. ահա այս էր իմ պատասխանս, փորձեալը կրկին փորձել յիմարութիւն է, խորհեցայ. և երբ այդ առաջարկը չընդունեցի, որ իրաւունք ունի մերթուլու, քանի որ բերանս այրած էր, ոչ թէ միայն Պէնզեանի խումբը վշտացաւ, հասցաւ նաև Պապար Մուրուի մէջ կարգ մը երիտասարդներու բացած Սրճարան—Ընթերցատան ծաղոյրը որոնք անշուշտ շահ մը կ'սպասէին ներկայացումէն. ահա առկէ ծագում առաւ տեղական թերթի մը 124 թուոյն մէջ Պ. . . սկզբնաւորով երեցած չորս տղամարդ յորուածն, որ ինչ վերնագրով մ'ըտել էր ալ չեմ գիտեր:

Թ. ՅԱՍՈՒԿԵԱՆԸ

Le Gérant J. MUNIER

Տպագ. «Միութիւն». — Թ. Ս. Փափագեանի

ՊԱՆԳ ԼԻՍԵՋ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԿԿՑՈՒՄ

Մ. ՍՍՍՕՅԵԱՆ

Իրանի հանրաժանօթ գրամատուէր, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալն ալ, Տ. Մկրտիչ Սօսոյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և իրանի բազարապետութեան պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանդ իրանցի միջոցաւ ամեն տեսակ գրամական և ֆուէտի ֆոնդիէի, վիւլ աը Բարբի և Գաղղիական ամէն արժեթուղիներու գործողութիւններ, զանձումներ, վստահան չնչին գումարի մը ինսպոյտութեամբ ձեռք կը բերուի քիչ ասունէն, պահեստի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափարդները հաճին գիտել Նիւպոսի վրայ փաստարան Ռարթարի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրաւ գրուկէն հետեալ հասցէին:

Մ. ՍՍՍՕՅԵԱՆ
Ի ԳԱՀԻՐԷ

ԱՏԱՆԱԲՈՅԺ

Պ. ՆԻԿՈՂԻՍՏՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ աը ըս Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գառիկներ:

Կը բժշկէ լեւնի և սկոպի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը գարանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ՊԵՆԱՆ-ԹԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿԵՐ
ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻԿԱՆՑ
ԵՒ ԶԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապրիլի մեծ պոլոսային վրայ Տայիրայի Սանիթի գիմպը, ճախկին էլիգրակ սն գործիւն ու վստ. ստուեր:

Վերջերս Ամերիկայէն հաս եկած հաստատուած ըլլալով կը յոյտորարուենք արդոյ հասարակութեան թէ պատրաստ ենք գահացնել մեզ գիմպ Պատ. յաճախորդները, գարծի մարբութեան, գինեբու չափաւորութեան և ճշգրտահանութեան կողմէն:

Մեր գործատուը այն մէջ կ'ուանգուին նաև ձեռագրութեան դասեր ամերիկեան ամենալիւթին կատարելապարճուած մէթատով:

Մանրամասնութեանց համար գիմպ մեր գործատուին:

ՃԱՇԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳՈՋԱՆՃԵԱՆ
Շար.ա Ապր. Սապահ
Նիւու-Տերիլեուէ դիլար. սնին գիմ սցը.

Օր ստան ու զուարճալի գիլը. մաքուր ու վայելուչ սպաս. համեզ ու սննդարար կերակուրներու զանազանութիւնն, անխարդախ պատրաստութիւն. ճոյն ճաշայուցակ մը գիլրամատչելի գինեբուլ. ահա՛ Գաղանձեան եղբարց ճաշարանը:

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող գիտէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

Տ Պ Ա Ր Ա Ն

Մ Ե Թ Ե Թ Ե Թ Ե Թ

Ի ԳԱՀԻՐԷ

Ա.ՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջարկականներ, այցեառներ, մահազգեր, հարսանեաց հրատիրագրեր, կանոնագիրներ, նամակազուլոններ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն.:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենալիւ խնամով եւ ճաշկատու սպազրութեամբ:

ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ